# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի մարտի 21-ին կնքված ՀՀ-ՖՆ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 ծածկագրով գնման պայմանագրում 2016թ-ի մարտի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքների փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով:

Փոփոխության նկարագրություն: Փոփոխվել է գնման պայմանագրի N-1 Հավելվածը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 60-րդ կետի 3-րդ մաս:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

# Համաձայնագիր-2
# 21.03.16թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «23» Մայիսի 2016թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «ԴԱՎ ՔՐԻԷՅՇՆ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Դ.Շահումյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 21.03.16թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Փոփոխել գնման պայմանագրի N-1 Հավելվածը՝ Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «ԴԱՎ ՔՐԻԷՅՇՆ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ., շ. 40, բն 44 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 01247084 |
| Հ/Հ 900011017101 | Հ/Հ 1570011435340100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ | «ԴԱՎ ՔՐԻԷՅՇՆ» ՍՊԸ -ի տնօրեն՝ |
| **Ա.Արզումանյան** | **Դ.Շահումյան** |

Հավելված
Հաստատված է
«21» մարտի 2016թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3
գնման պայմանագրի փոփոխությամբ

| Հ/հ | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | քանակը | միավորի գինը | ընդամենը | Մատակարարման վայրը | մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ցուցանակի տպագրություն-1 | 90սմ բարձրությամբ և 70սմ լայնությամբ, ալյումինե նյութից պատրաստված ցուցանակի վերին մասում պետք է սևով տպագրված լինի (տառերի բարձրությունը՝ 20մմ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ<br>Իսկ գրառումից ծախ պետք է պատկերված լինի հարկային պետական ծառայության գունավոր խորհրդանիշը: Ավելի ներքև պետք է տպագրված լինի (տառերի բարձրությունը՝ 26մմ, հոռմեականինը՝ 46մմ) հետևյալ գրառումը.<br>I ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ<br>II ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ<br>ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ԲԱԺԻՆ<br>ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ<br>III ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ<br>ՕՀՎ 19-ՐԴ ԲԱԺԻՆ<br>Ցուցանակը պետք է եզերված լինի 4 սմ բարձրությամբ եզրատներով (борт) և ունենա ամրացնելու համար նախատեսված առնվազն երկու անցք: | հատ | 1 | 38000 | 38000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Ցուցանակի տպագրություն-2 | 40սմ բարձրությամբ և 120սմ լայնությամբ, ալուկաբոնդ նյութից պատրաստված ցուցանակի վրա պետք է տպագրված լինի (տառերի բարձրությունը՝ 75մմ)<br>ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ<br>ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀ<br>Ցուցանակը պետք է եզերված լինի 4 սմ բարձրությամբ ելուստներով (борт) և ունենա ամրացնելու համար նախատեսված առնվազն երկու անցք: | հատ | 1 | 25000 | 25000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 3. | Ցուցանակի տպագրություն-3 | Եռաշերտ, օրգանական ապակու վրա, չափսը՝ 10x30սմ, ստորաբաժանումների անվանումը նշող գրառման տպագրություն, վրան փակցրած համարով, 0.5մմ խորությամբ լազերային փորագրությամբ: Ամրացնելու հնարավորությամբ: | հատ | 28 | 4200 | 117600 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4. | Ցուցանակի տպագրություն-4 | Եռաշերտ օրգանական ապակու վրա, չափսը՝ 12x30սմ, հարկի համարի և ՀԱՐԿ բառի տպագրություն, 0.5մմ խորությամբ լազերային փորագրությամբ:<br>Ամրացնելու հնարավորությամբ: | հատ | 3 | 4500 | 13500 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 5. | Ցուցանակի տպագրություն-5 | Եռաշերտ օրգանական ապակու վրա զուգարանների դռներին փակցնելու համար ստորև նկարագրվող պատկերի տպագրություն. վերևում շրջանակ, իսկ ավելի ներքև հիմքը դեպի վեր ուղղված հավասարասրուն եռանկյուն:<br>Չափսը՝ 9x9սմ: Ամրացնելու հնարավորությամբ: | հատ | 20 | 1500 | 30000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 6. | Ցուցանակի տպագրություն-6 | Եռաշերտ օրգանական ապակու վրա ծխելը արգելող պատկերանշանի պատկերման տպագրություն: Չափսը՝ 15x15սմ: Ամրացնելու հնարավորությամբ: | հատ | 6 | 1800 | 10800 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 7. | Ցուցանակի տպագրություն-7 | Երկշերտ օրգանական ապակուց երկու շարքից (յուրաքանչյուրում հնգական A4 ձևաչափի գրպանիկ) բաղկացած ցուցանակի վերևում ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ գրառման տպագրություն: Ամրացնելու հնարավորությամբ: | հատ | 1 | 42000 | 42000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8. | Ցուցանակի տպագրություն-8 | 70սմ բարձրությամբ և 50սմ լայնությամբ, չժանգոտող մետաղից, վերևի միջնամասում պետք է ամրացված լինի ՀՀ զինանշանի գունավոր պատկերը՝ բարձրությունը առնվազն 153մմ, լայնությունը առնվազն 160մմ: Միջնամասում պետք է տպագրված (փորագրված) լինի (տառերի բարձրությունը՝ 29մմ) հետևյալ գրառումը՝<br>ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ<br>ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ<br>ԿԱՊԱՆԻ<br>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ<br>ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ<br>Ցուցանակը պետք է ունենա ցուցանակի շրջանակը եզերող մետաղական հենք և պատին ամրացնելու հնարավորություն | հատ | 1 | 145000 | 145000 | ք.Երևան, Մ. Ադամյան 1 կամ ք. Երևան, Խորենացի 7 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 9. | Ցուցանակի տպագրություն-9 | Երկշերտ օրգանական ապակուց՝ 3 մմ հաստությամբ, չափսը՝ 45x45սմ, ցուցանակի վրա երթուղու համարը նշող գրառման տպագրություն՝ նախատեսված միկրոավտոբուսի դիմային ապակուն ամրացնելու համար: | հատ | 10 | 6700 | 67000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 10. | Ցուցանակի տպագրություն-10 | Միկրոավտոբուսի երկու կողմից, 13սմ տառերի բարձրությամբ, հետևյալ գրառման տպագրություն.<br>ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ<br>ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ<br>www.minfin.am | հատ | 10 | 16000 | 160000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |
| 11. | Ցուցանակի տպագրություն-11 | Միկրոավտոբուսի ետնամասում, 18սմ տառերի բարձրությամբ, մեքենայի պետհամարանիշի գրառմամբ տպագրություն: | հատ | 10 | 6000 | 60000 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12. | Ցուցանակի տպագրություն | 70սմx90սմ չափսի օրգանական ապակուց պատրաստված ցուցանակի վրա տպագրություն, վերևի միջնամասում պետք է լինի ՀՀ զինանշանի գունավոր պատկերը; Միջնամասում պետք է տպագրված լինի հետևյալ գրառումը՝<br><br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ<br><br>Ցուցանակը պետք է ունենա ցուցանակի շրջանակը եզերող հենք և պատին ամրացնելու հնարավորություն: | հատ | 7 | 16500 | 115500 | ՀՀ ֆինանսների նախարարություն ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում |

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «ԴԱՎ ՔՐԻԷՅՇՆ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մելիք Ադամյան 1 | ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ., 2. 40, բն 44 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 01247084 |
| Հ/Հ 900011017101 | Հ/Հ 1570011435340100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ | «ԴԱՎ ՔՐԻԷՅՇՆ» ՍՊԸ -ի տնօրեն՝ |
| **Ա.Արզումանյան** | **Դ.Շահումյան** |